

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ՃԱՆԱԶՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»**

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով  
14-17 սեպտեմբերի 2017թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ  
**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

2-ая международная молодёжная конференция  
**«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ  
МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ  
РЕСПУБЛИКИ АРЦАХ»**  
14-17 сентября 2017г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**“ISSUES AND PROSPECTS OF THE  
ARTSAKH REPUBLIC’S  
INTERNATIONAL RECOGNITION”**

2<sup>nd</sup> international youth conference  
September 14-17, 2017  
Stepanakert, Artsakh (NKR)

**SOURCEBOOK**

ԱԵԳՍՍ-ՕՄՍՏԱ-ՍՅՏՏԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ-YEREVAN  
2017

ՀՏԴ 32.001:06  
ԳՄԴ 66.0  
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի  
Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
*Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц в Степанакерта*  
*Recommended for publication by the decision of the Academic Council  
of the Mesrop Mashots University in Stepanakert*

### Խմբագրական խորհուրդ

**Նախագահ՝** ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Գագիյան**

**Անդամներ՝** հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան**, պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**  
**Քարտուղար՝** ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

### Редакционный совет

**Председатель:** д.ю.н., проф., академик НАН РА Гагик Казинян

**Члены:** д.п.н., проф. Грант Аванесян, д.и.н., проф. Валерий Аванесян, д.п.н., доцент Хачик Галстян, д.ю.н., проф. Владислав Груздев, д.ф.н., проф. Сократ Ханян, д.ю.н., проф. Ашот Хачатрян, д.п.н., проф. Мариам Маргарян, д.э.н., проф. Айк Саргсян, д.п.н., проф. Гарик Керян, к.и.н., доц. Григор Баласания, к.и.н., доц. Нелли Багдасарян, к.э.н., доц. Евгения Айриян, к.ю.н., доц. Анаит Манасян, к.п.н., доц. Витя Ярамишян, к.э.н., доц. Карен Персисян, к.ю.н. Сирануш Петикян

**Секретарь:** к.ю.н. Аветик Арутюнян

### Editorial board

**Editor-in-Chief:** Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician

**Editors:** Hrant Avanesyan, Psy.D., Prof., Valeri Avanesyan, Doctor of History, Prof., Khachik Galstyan, Dr sc. pol., Assoc. Prof., Vladislav Gruzdev, LL.D., Prof., Sokrat Khanyan, Doctor of Philology, Prof., Ashot Khachatryan, LL.D., Prof., Mariam Margaryan, Dr sc. pol., Prof., Hayk Sargsyan, Dr sc. ec., Prof., Garik Keryan, Dr sc. pol., Prof., Grigor Balasanyan, Candidate of History, Assoc. Prof., Nelly Baghdasaryan, Candidate of History, Assoc. Prof., Yevgenya Hayriyan, Candidate sc. ec., Assoc. Prof., Anahit Manasyan Candidate of Law, Assoc. Prof., Vitya Yaramishyan, Candidate of Psy. sc., Assoc. Prof., Karen Nersisyan, Candidate sc. ec., Assoc. Prof., Siranush Petkiyan, Candidate of Law

**Secretary:** Avetik Harutyunyan, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի կյուբերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի կյուբերը:

В сборник включены материалы 2-ой международной молодежной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2<sup>nd</sup> international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06  
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԸ՝  
ՈՐՊԵՍ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԻՐԱՎԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔ**

**Արտաշես Խալաթյան**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ,*

*ԱԵԳՄՄ անդամ*

[artashes.khalatyan@mail.ru](mailto:artashes.khalatyan@mail.ru)

*Գիտ. դեկ.՝ ի.գ.թ., ողո. Վ.Այվազյան*

Արցախի հակամարտության հայանպաստ կարգավորումը հանդիսանում է հայկական դիվանագիտության առանցքային խնդրականներից մեկը: Միևնույն ժամանակ շուրջ մեկ դար տևող այս հակամարտությունն ունի լուրջ աշխարհաքաղաքական ընդգրկում և գտնվում է միջազգային ու տարածաշրջանային գերտերությունների շահերի կիզակետում: Այս հանգամանքը խնդրին տալիս է ընդգծված միջազգային նշանակություն, ինչը հայրենի քաղաքական գործիչներից և դիվանագետներից պահանջում է առավելագույն ճկունություն և զգուշավորություն: Սույն համատեքստում միջազգային իրավունքը ձեռք է բերում լրացուցիչ կարևորություն, քանզի հանդիսանում է հակամարտության ուղղակի և անուղղակի սուբյեկտների շահերն զսպող և համադրող հիմնական գործիքը: Վերջինս անջատման՝ սեցեսիայի հետ կապված հակամարտությունների լուծման հարցում նախատեսում է մի քանի տարբերակներ և այդ իմաստով՝ կողմերի համար մասնաբերելու որոշակի հնարավորություն: Տարբերակների ընտրությունը և բանակցությունների ընթացքում դրանք առաջ մղելը կախված է կողմերի դիվանագիտական անձնակազմի ձեռնհասությունից, կամքից, հակամարտության պատմությունից և օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարբեր գործոններից, սակայն, անկասկապ այս կամ այն հնարավորության կիրառելիությունից, դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը խիստ կարևոր է բանակցային ընդհանուր ռազմավարությունը և դրանից բխող մարտավարական մոտեցումները ճշգրիտ մշակելու և իրացնելու համար:

Գալով բուն արցախյան հակամարտությանը՝ հարկ է նշել, որ ներկայումս գործող կարգավորման հայեցակարգը՝ Մադրիդյան սկզբունքները, Կազանյան փաստաթուղթը, ելնում է ԱՀ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման ճանաչման պայմանից<sup>1</sup>, փոխաբերելով՝ ԱՀ-ի ավելի քան 20 ամյա պատմությունը թույլ է տալիս հայկական կողմին առաջ քաշել ԱՀ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման փաստի ճանաչման թեզը: ԱՀ-ի դեպքում այն ըստ Եուրոպանոսյանում է պետության ճանաչման ինստիտուտի հետ:

Ճանաչումը՝ որպես իրավական և քաղաքական ակտ, ունի խիստ կարևոր նշանակություն պետության կողմից միջազգային իրավասուբյեկտության ձեռքբերման համար: Այլ կերպ ասած՝ պետության ճանաչումը իրերի փաստացի դրության՝ de facto ռեժիմի իրավաբանական ամրագրումն է որոշակի չափանիշներին համապատասխան: Ավելին՝ միջազգային պրակտիկայում

<sup>1</sup> Տե՛ս Մադրիդյան սկզբունքներ- ամբողջական տեքստ <http://www.aniarc.am/2016/04/13/madrid-principals-armenian-text/>, Կազանյան փաստաթուղթ(աշխատանքային տարբերակ) <http://norkhosq.net/2016/07/%D5%AF%D5%A1%D5%A6%D5%A1%D5%B6%D5%AB-%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A9%D5%B8%D6%82%D5%B2%D5%A9-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A2/>:

տարածքային վեճերը երբեմն կարգավորվել են հենց վիճելի երկրամասի՝ որպես անկախ պետության միջազգային ճանաչմամբ նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ միավորը չէր բավարարում պետության չափանիշներին: Օրինակ՝ Բոսնիա-Յերզեգովինան պետությունների կողմից սկսեց ճանաչվել 1992թ., և ճանաչման գործընթացն ամրապնդվեց 1995թ. Դեյթոնյան համաձայնագրերով այն դեպքում, որ Բոսնիա-Յերզեգովինայի իշխանությունները դեռևս չէին վերահսկում երկրի ողջ տարածքը, և հետևաբար դեռևս խոսք չէր գնում պետության այնպիսի տարրի անկախության մասին, ինչպիսին անկախ և արդյունավետ կառավարությունն է՝ Այսինթա՝ պետության միջազգային-իրավական ճանաչումը կարող է ինչպես հիմնվել արդեն իսկ ձևավորված և լիարժեքորեն գործող պետա-իշխանական հաստատություններով տարածքային միավորի՝ որպես փաստացի իրականության ճանաչման վրա, այնպես էլ դեռևս ոչ լիարժեք պետա-իշխանական սուբյեկտին տալով պետության կարգավիճակ՝ այդպիսով կայուն երաշխիքներ ստեղծել այդ սուբյեկտի՝ որպես պետության վերջնական կայացման համար:

Պակաս կարևոր չէ նաև այն, որ պետությունների համայնքի կողմից քաղաքական միավորին պետական կարգավիճակ տալն ունի ոչ միայն իրավաբաղաձայնական, այլև անվտանգային նշանակություն: Բանն այն է, որ չճանաչված քաղաքական միավորի առկայությունն ստեղծում է մի իրավիճակ, երբ որոշակի երկրամասում միջազգային հանրային իրավունքի նորմերը փաստացի չեն գործում՝ թերևս բացառությամբ միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների հանրաճանաչ սկզբունքների, որոնք, սակայն, գործում են միայն անհատ ֆիզիկական անձանց նկատմամբ, իսկ ահա չճանաչված պետությունը՝ որպես հանրային-քաղաքական սուբյեկտ, չի օգտվում միջազգային իրավունքով նախատեսված գործնականում որևէ իրավունքից: Սա նշանակում է, որ չճանաչված պետական միավորի նկատմամբ չի գործում նաև ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, սահմանների անձեռնմխելիության և մի շարք այլ *ius cogens* սկզբունքներ, որոնք նախատեսված են ՄԱԿ-ի կանոնադրությամբ, Յելսինյան եզրափակիչ ակտով և միջազգային այլ հանրաճաչ իրավական ակտերով, ինչն ստեղծում է «լեգիտիմ» հիմքեր չճանաչված պետության նկատմամբ այլ պետությունների ոտնձգության համար, քանզի հայտնի է, որ միջազգային իրավունքը կարգավորում է նախևառաջ միջպետական հարաբերություններ և իրավունքներ ու պարտականություններ է սահմանում պետությունների համար, որպիսի փաստն արտացոլված է միջազգային իրավական ակտերում<sup>2</sup>:

Փաստորեն չճանաչված պետությունների օտարակիցվող վտանգում է տարածաշրջանային և գլոբալ անվտանգությունը, քանզի պայմաններ է ստեղծում ռազմական գործողությունների իրականացման և միջազգային հանրության կողմից չլեգիտիմացված տարածքային միավորի նկատմամբ այլ պետությունների անեթսիոն ծրագրերի կենսագործման և դրանցից ածանցվող կորստաշատ ռազմական հակամարտությունների համար: Այս առումով գոնե պետությունների մի մասի կողմից անկախության ձգտող երկրամասի ճանաչումը ստեղծում է որոշակի անվտանգային միջավայրի իրավական հիմքեր, քանզի առնվազն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն սկսում են գործել՝ պաշտպանելով ինչպես տվյալ պետությանը, այնպես էլ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

<sup>1</sup> St'u Hilgruber, Christian The Admission of New States to the International Community, *European Journal of International Law*, <http://www.ejil.org/article.php?article=664&issue=49>, p. 493

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ ՄԱԿ-ի կանոնադրության 3-րդ հոդվածը

Որքան էլ, որ պետությունների ճանաչման գործընթացն անխուսափելիորեն կրում է ձևավորված քաղաքական կոնյուկտուրայի կնիքը, այն, այդուհանդերձ, միջազգային-իրավական գործընթաց է և ունի որոշակի չափանիշներ և ընթացակարգեր, որոնց պետք է համապատասխանի նորաստեղծ պետությունը: Կարելի է առանձնացնել պետությունների ճանաչման չափանիշների 3 համակարգ, որոնք գործում են որոշակի փոխկապվածության մեջ: Դրանք են՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված՝ այդ կառույց կամ, որ նույնն է, թե պետությունների համայնք մտնելու կանոն-չափանիշները, Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միությունում նոր պետությունների ճանաչման ուղենիշների մասին Եվրոպական Համայնքի (ներկայում Եվրոպական Միության) հռչակագիրը և Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին Մոնտեվիդեոյի կոնվենցիան:

1-ին երկու միջազգային փաստաթղթերում տեղ գտած չափանիշները համադրելի են: ՄԱԿ-ի կանոնադրության 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ՄԱԿ-ի անդամ կարող են դառնալ այն պետությունները, որոնք խաղաղասեր են, ընդունում են Կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները և Կազմակերպության որոշմամբ ունակ են և ցանկություն ունեն կատարել դրանք»: Պետականությանը ներկայացվող բոլոր մագյալ պահանջերը, որոնք բխում են միջազգային արակտիկայից, ինչպես, օրինակ՝ տվյալ պետության իրավասության ներքո գտնվող տարածքի նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը, իրավական համակարգի առկայությունը, բխում են նշյալ պահանջից: Այն, իրոք, ունի համակարգային նշանակություն, քանզի ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները վերաբերում են միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը, ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման արգելքին, պետությունների միջև համագործակցությանը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելուն, պետությունների ինքնիշխանության և անկախության նկատմամբ ոտնձգություն չկատարելուն և այլն: Ակնհայտ է, որ նման և բազմաթիվ այլ սկզբունքների և նորմերի ի կատար ածման համար հարկավոր է, որպեսզի պետությունն ունենա արդյունավետ կառավարման համակարգ, իր իշխանությունը տարածի իր իրավասության ներքո գտնվող տարածքի վրա, ունենա մշտական քնակչություն՝ քաղաքացիներ և այլն<sup>1</sup>:

Եվրոպական Համայնքի կողմից ընդունված 1991թ. հռչակագրում առանձնացվում են այն սկզբունքները, որոնց պետք է համապատասխանելն այսպես կոչված ժողովրդավարացման 3-րդ ալիքի պետությունները, որոնք առաջացան Արևելյան Եվրոպայում և հետխորհրդային տարածքում խորհրդային ճամբարի փլուզումից հետո: 1-ին հայացքից կարող է թվալ, թե այս սկզբունքներն ունեն նեղ կարգավորման առարկա և առնչվում են միայն Հռչակագրում նշված պետություններին, սակայն Եվրոպական Համայնքի հետագա զարգացումը և Եվրոպական Միության ձևավորումն արդիական դարձրին նոր անդամ-պետությունների ընդունելիության չափանիշների առկայությունը, որոնք մեծապես փոխառվեցին քննարկվող Հռչակագրից և մարմնացան այսպես կոչված Կոպենհագենյան չափանիշներում<sup>2</sup>: Բացի այդ, քանի որ Արցախի Հանրապետությունը ձևավորվել է հենց ԽՍՀՄ-ի կործանման հետևանքով,

<sup>1</sup> Տե՛ս նաև Hilgruber, Christian, նշվ. աշխ., էջ 499-500

<sup>2</sup> Տե՛ս ԵՄ անդամակցության Կոպենհագենյան չափանիշներ, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/glossary/terms/accession-criteria\\_en](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/glossary/terms/accession-criteria_en):

Եվրոպական Համայնքի նշյալ հռչակագիրը ձեռք է բերում լրացուցիչ կարևորություն հայկական 2-րդ պետության միջազգային ճանաչման համար:

Եվ այսպես, Հռչակագրով նախատեսված են նորաստեղծ պետությունների միջազգային իրավասությունների հետևյալ չափանիշները՝ հարգանք ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի և Փարիզի հռչակագրի դրույթների նկատմամբ, այլ պետությունների սահմանների անձեռնմխելիության սկզբունքի պահպանում, ազգային փոքրամասնությունների իրավունքների հարգում, ապառազմականացում: Հռչակագրում հստակորեն նշվում է, որ Եվրոպական համայնքի կողմից կճանաչվեն այն պետությունները, և նրանց հետ կհաստատվեն դիվանագիտական հարաբերություններ, որոնք համապատասխանում են նշյալ չափանիշներին<sup>1</sup>: Ակնհայտ է, որ թե՛ ՄԱԿ-ի կանոնադրությունը և թե՛ ԵՀ-ի հռչակագիրը շեշտը դնում են ճանաչվող պետությունների կողմից որոշակի գործառույթների իրականացման պարտավորությունների կատարման ունակության վրա, ինչը, սակայն ամենևին չի նսեմացնում այդ պետությունների նյութական և կառուցակարգային հիմքերի առկայության կարևորությունը՝ տարածք, բնակչություն, արդյունավետ և անկախ կառավարության առկայություն և այլն, քանզի միջազգային հանրության կողմից առաջադրվող գլոբալ բնույթի հիմնախնդիրները կարող են իրականացնել միայն պետականության կառուցվածքային բոլոր պահանջները բավարարող քաղաքական միավորները:

Մոնտեվիդեոյի կոնվենցիան կնքվել է 1933թ. Ամերիկյան պետությունների համաժողովում և վավերացվել Ամերիկայի աշխարհամասի պետությունների՝ ներառյալ ԱՄՆ-ի կողմից: Հետագայում սույն Կոնվենցիայի դրույթները ձեռք բերեցին սովորության նշանակություն և կիրառելի են պետականության ճանաչման ցանկացած ակտի նկատմամբ: Համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ պետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ մշտական բնակչություն, որոշակի տարածք, կառավարություն և ունակություն մտնել միջազգային հարաբերությունների մեջ:

Ինչպես կարելի է եզրակացնել, պետությունների միջազգային ճանաչմանը վերաբերող այս 3 փաստաթուղթը բովանդակային իմաստով ձևավորում են հետաքրքիր մի շղթա, որը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. որպեսզի պետությունը հավակնի միջազգային ճանաչման, այն պետք է ունենա Մոնտեվիդեոյի կոնվենցիայով նախատեսված պետականության տարրերը և ունակ ու պատրաստակամ լինի ապահովել ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները: Հետխորհրդային տարածքում ձևավորված պետությունները, ի լրումն այդ 2 իրավական ակտերի, կրում են նաև ԵՀ-ի հռչակագրի նորմերի ազդեցությունը:

Այժմ դիտարկենք, թե ինչպես է Արցախի Հանրապետությունն՝ իր պետական տարրերով, հարաբերակցվում պետության ճանաչման՝ միջազգային չափանիշների հետ:

Այսպես, նախ դիտարկենք Արցախի Հանրապետության՝ որպես պետության նյութական հատկանիշների առկայությունը՝ տարածք և բնակչություն: Որպես ներքին կառուցվածքի առումով կայացած պետություն՝ Արցախի Հանրապետությունում տարածքային սահմանների հարցը կարգավորված է

<sup>1</sup> St'u Declaration on the 'Guidelines on the Recognition of New States in Eastern Europe and in the Soviet Union' (16 December 1991) [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/glossary/terms/accession-criteria\\_en](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/glossary/terms/accession-criteria_en):

սահմանադրական մակարդակում: Այսպես, Արցախի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի համաձայն՝ մինչև Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Արցախի Հանրապետության իրավագրության ներքո: Սույն իրավադրույթը ոչ միայն սահմանում է Արցախի Հանրապետության հանրային իշխանության իրավագրության տարածքային սահմանաչափը, ինչը պետության անբակտելի հատկանիշներից է, այլև սահմանադրական մակարդակի է հասցնում Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման հարցը՝ հաշվի առնելով, որ Արցախի Հանրապետության մի շարք տարածքներ՝ Շահումյանը, Գետաշենը և այլն, բռնազավթված են Ադրբեջանի կողմից: Այդպես Արցախի Հանրապետությունն առնվազն անուղակիորեն հակամարտության կարգավորման իր տեսլականն է առաջ քաշում՝ Ադրբեջանի հիմնազուրկ տարածքային պահանջներին հակադրելով սահմանադրական մակարդակում ամրագրված, զուսպ, սակայն իմաստալից իրավանորմը՝ որպես Արցախի Հանրապետության պետական քաղաքականության հիմնադրույթներից մեկը: Արցախի Հանրապետության տարածքային սահմանների հարցի սահմանադրական կարգավորումն ամբողջանում է Սահմանադրության 134-րդ հոդվածով, որը վերաբերում է Արցախի վարչատարածքային բաժանմանը և Սահմանադրության հիման վրա գործող համանուն օրենքով:

Պետականության հաջորդ նյութական պայմանը բնակչության առկայությունն է: ԱՀ-ն բավարարում է նաև այս պայման-չափանիշին: Պետականակերտման տեսանկյունից բնակչության առկայությունը հանգում է քաղաքացիության ինստիտուտին: ԱՀ-ի Սահմանադրության 47-րդ հոդվածով կարգավորված են քաղաքացիության ձեռքբերման եղանակները և սույն ինստիտուտի հետ կապված հիմնական խնդիրները: Հիմնական օրենքի 93-րդ հոդվածի 23-րդ կետը նախատեսված քաղաքացիություն շնորհելու լիազորություն է սահմանել ԱՀ-ի նախագահի համար: Քաղաքացիության ինստիտուտին է նվիրված նաև ԱՀ-ի քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին օրենքը, որն այլ հարցերի հետ մեկտեղ կարգավորում է քաղաքացիության ինստիտուտի երկու կարևոր ասպեկտներ՝ պետության և իր քաղաքացու փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ամրագրում և արտերկրում իր քաղաքացիներին ԱՀ-ի կողմից պաշտպանության տրամադրում (հոդվ. 1, 6):

Հաջորդ պայմանը, որն արդեն մտնում է պետության կառուցակարգային պայմանների կամ ատրիբուտների շարքը, իր տարածքում իշխող կառավարության առկայությունն է: Միջազգային իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում այն նաև կոչվում է արդյունավետ կառավարություն, այսինքն՝ մի կառավարություն, որը ոչ միայն ներկայացնում է լայն իմաստով պետական իշխանության մարմինների համակարգ, որոնք ձևավորում են քաղաքացիների կառավարման համար անհրաժեշտ իրավական համակարգ, այլև իրավական, վարչական և անհրաժեշտության դեպքում նաև լեզուի ուժային եղանակով վերահսկում են երկրի ողջ աշխարհագրական տարածքը: Այս իմաստով ԱՀ-ի Սահմանադրությունը նախատեսում է պետական իշխանության մարմինների ճկուն համակարգ, որը գործում է նախագահական կառավարման ձևի շրջանակներում՝ հակակշիռների և զսպումների արդյունավետ գործիքների կիրառմամբ: ԱՀ-ի

<sup>1</sup> Տե՛ս նաև. Hilgruber, Christian, Նշվ. աշխ., էջ 494, *Secession, International Law Perspectives*, edited by M.G. Cohen, Cambridge University Press, 2006, էջ 94

իշխանական մարմինները, իրենց ժողովրդավարական լեգիտիմությունը սահմանադրորեն ստանալով Արցախի բաղաբացիներից, արդյունավետ պետական կառավարում են իրականացնում երկրի ողջ սահմանադրական տարածքում:

Միջազգային հարաբերությունների մեջ մտնելու, ՄԱԿ-ի կանոնադրության և ԵՅ-ի հռչակագրի դրույթները կենսագործելու ունակության չափանիշները դիտարկենք միասնության մեջ, քանզի դրանք օրգանապես փոխկապակցված են և կազմում են պետական ապարատի գործունեության որակական կողմը: Սույն չափանիշի իմաստով ևս ԱՅ-ն կայացած պետություն է՝ արժանի միջազգային ճանաչման: Նախ՝ ԱՅ-ի՝ որպես միջազգային կանխատեսելի գործընկերոջ մասին է խոսում այն հանգամանքը, որ Արցախը ժողովրդավարական պետություն է, ունի Սահմանադրություն, որը հստակորեն կարգավորում է ԱՅ-ի սահմանադրական կարգի հիմունքները, պետություն-հասարակություն փոխհարաբերության առանցքային սկզբունքները, սահմանում է ժողովրդավարական ճանապարհով ձևավորվող պետական իշխանության մարմինների համակարգ: Սույն փաստը, հաշվի առնելով ժողովրդավարության և մարդու իրավունքների լիբերալ դոկտրինի գերակայությունն աշխարհում, միջազգային հանրության հետ երկխոսելու առաջնային նախապայմաններից մեկն է: Ավելին՝ միջազգային եղինակավոր իրավապաշտպան կազմակերպությունների ղեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արցախը շատ ավելի ժողովրդավարական պետություն է, քան հարևան Ադրբեջանը, Իրանը, Թուրքիան: Մինևույն ժամանակ այդ ղեկույցներում Արցախի վերաբերյալ տվյալների ներկայացումը, ինչպես նաև աշխարհի տարբեր պետությունների՝ Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Մեծ Բրիտանիայի և այլ պետությունների խորհրդարանների պատգամավորների և այլ բաղաբական ու մշակութային գործիչների պարբերաբար ժամանումն Արցախ ցույց է տալիս հայկական 2-րդ պետության նկատմամբ միջազգային հանրության հետաքրքրության աճի և փաստացի ճանաչման գործընթացի ծավալման մասին: Ավելին՝ Արցախյան հակամարտության ընթացքում Ադրբեջանի պետական ղեկավարության և Արցախի վարչակազմի միջև պաշտոնական գրագրությունը և կնքված փաստաթղթերը ցույց են տալիս, որ Ադրբեջանն Արցախին ճանաչել է առնվազն որպես հակամարտության լիիրավ կողմ, ինչը ենթադրում է մեր հակառակորդի կողմից ԱՅ-ի բաղաբական-պետական սուբյեկտության լռելյայն ընդունում<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս.Աբիևի նամակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի իրամասնատար Ս. Բաբայանին 27.07.1993թ., ինչի արդյունքում պետք է տեղի ունենար Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի պաշտոնական ներկայացուցիչների հանդիպումը, Ադրբեջանի Հանրապետության նախագահի պարտականությունները կատարող Յ. Ալիևի 03.09.1993թ. որոշումը լիազորել գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Ա. Ջալիլովին Ադրբեջանի և ԼՂՀ ղեկավարների հանդիպում կազմակերպելու նպատակով վարել բանակցություններ, 05.05.1994թ. Բիշքեքի արձանագրությունը, որն ստորագրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Կ.Բաբոյանի և Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի տեղեկալ Ա.Ջալիլովի կողմից, որով նախատեսվում է մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը դադարեցնել կրակը, նույն թվականի մայիսի 9-ից 11-ը կնքված կրակի դադարեցման մասին համաձայնագիրը, որն ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս.Մամեդովի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս.Սարգսյանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարար Ս.Բաբայանի կողմից, 04.02.1995թ. կրակի դադարեցման ռեժիմի ամրապնդման մասին համաձայնագիրը, որը նույնպես եղել է եռակողմ:



Ընդհանուր առմամբ, Ժողովրդավարական հասարակական-քաղաքական համակարգի առկայությունը բարձրացնում է ԱՅ-ի կայունության և անվտանգության մակարդակը: Բացի այդ, ԱՅ-ն, նույնիսկ չլինելով ՄԱԿ-ի անդամ, փաստացի պահպանում է ՄԱԿ-ի կանոնադրության բոլոր հիմնական սկզբունքները և հանդիսանում է տարածաշրջանի ռազմական կայունության և անվտանգության երաշխավորներից մեկը<sup>1</sup>: Արցախյան համակարտության ողջ ընթացքում ԱՅ-ն եղել է լեզիտիմ պաշտպանվողի դերում և հարթել է ագրեսոր Ադրբեջանի կողմից իրեն պարտադրված պատերազմում: Արցախը պահպանում է նաև ԵՅ-ի Յուգոսլավիայի դրոյթները: ԱՅ-ն հարգում է այլ պետությունների սահմանների անձեռնմխելիությունը և երբևէ չի դիմել որևէ ագրեսիվ գործողությունների այլ պետությունների նկատմամբ, հավատարիմ է Յելսինկյան եզրափակիչ ակտի պահանջներին, որոնք մեծապես համընկնում են ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների հետ: Մասնավորապես, Արցախի Հանրապետության Սահմանադրության 20-րդ և 56-րդ հոդվածների համաձայն՝ Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք, երաշխավորվում է նրանց լեզուների ազատ գործածումը, ԱՅ-ն չի միջամտում այլ պետությունների ներքին գործերին, հավատարիմ է միջազգային կանոնփխկոտերը խաղաղ ճանապարհով լուծելու պարտավորությանը և, մասնավորապես, Ադրբեջանի հետ հակամարտության լուծմանը ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ձևաչափի շրջանակներում և այլն: Արցախի Հանրապետությունը 1992թ. ապրիլից սկսած աշխարհի տարբեր երկրներում, մասնավորապես համաշխարհային քաղաքականության մեջ քաղաքական եղանակ ստեղծող պետություններում, հիմնել է մշտական ներկայացուցչություններ, որոնց թիվն այսօր հասնում է յոթի՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, ՀՀ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրալիայում, Լիբանանում: Այսքանից արդեն ակնհայտ է դառնում, որ ԱՅ-ն ունի բոլոր իրավաքաղաքական հիմքերը միջպետական հարաբերությունների լիարժեք սուբյեկտ ճանաչվելու և անհրաժեշտ ինստիտուցիոնալ ներուժ միջազգային հարաբերությունների մեջ մտնելու համար: Հայկական դիվանագիտությունը, արդ, պետք է բոլոր հնարավոր միջոցներով փորձի հասնել բանակցությունների բովանդակության փոփոխմանը՝ հիմքում դնելով ինքնորոշված Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հարցը: Արցախի Հանրապետությունը կարիք չունի նոր հանրաքվեի՝ իր անկախությունն ու ինքնորոշումը հաստատելու համար: Ավելի քան 20 տարվա ժամանակահատվածը հստակ ցույց է տալիս, որ ԱՅ-ն պետականության բոլոր ատրիբուտներով, կայացած պետություն է և լիարժեքորեն կարող է անդամակցել թե՛ ՄԱԿ-ին և թե՛ միջազգային այլ կազմակերպությունների՝ դառնալով պետությունների համայնքի լիիրավ անդամ:

---

<sup>1</sup> Տես, օրինակ, Нагорный Карабах - "гарант сохранения стабильности в регионе": карабахский ученый, <http://old.memo.ru/d/18003.html>

**Արտաշես Խալաթյան**  
**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻԵՐԸ՝**  
**ՈՐՊԵՍ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՄԻԶԱԶՊԱՅԻՆ ՃԱՆԱԳՄԱՆ ԻՐԱԿԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԵ**

**Բանալի բառեր՝** *Արցախ, միջազգային ճանաչում, պետականություն, ՄԱԿ, Եվրոպական Համայնք, Մոնտեվիդեոյի կոնվենցիա, անվտանգություն*

Սույն հոդվածը նվիրված է պետությունների միջազգային ճանաչման հիմնահարցի ուսումնասիրությանն ու պետությունների ճանաչման չափանիշների վերհանմանը: Նշվածի լույսի ներքո քննության առարկա է դարձվում ԱՀ-ի միջազգային ճանաչման ինդիորը և Արցախի համապատասխանությանը պետության ճանաչման միջազգային-իրավական չափանիշներին: Հոդվածի նպատակն է իրավավերլուծական հիմք ստեղծել դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններում հայկական կողմի դիրքորոշման հայեցակարգային փոփոխության համար՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հնարավորության ճանաչումից դեպի ինքնորոշման փաստի կամ, որ նույնն է, թե ԱՀ-ի միջազգային ճանաչում: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՀ-ն ամբողջովին համապատասխանում է պետության միջազգային ճանաչման գործող չափանիշներին, ուստի հայկական կողմն ունի բոլոր իրավական և փաստական հիմքերը ԱՀ-ի միջազգային ճանաչման հարցը բանակցային օրակարգ ներառելու հարցը բարձրացնելու համար:

*Արտաիես Խալաթյան*  
**АТРИБУТЫ ГОСУДАРСТВЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРЦАХ  
КАК ПОЛИТИКО-ПРАВОВАЯ ОСНОВА МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ  
РЕСПУБЛИКИ АРЦАХ**

**Ключевые слова:** *Арцах, международное признание, государственность, ООН, Европейское Сообщество, Конвенция Монтевидео, безопасность*

Данная статья посвящена исследованию вопроса международного признания государств и выявлению его критериев. В свете проведенного анализа исследуется тема международного признания РА и, в частности, проблема соответствия второго армянского государства междунардным стандартам. Цель статьи - создать правовую и аналитическую основу для изменения концепции армянской стороны на переговорном процессе по урегулированию карабахского конфликта с международного признания возможности самоопределения карабахского народа к признанию факта реализации права на самоопределения, т.е. признания государства РА. По результатам проведенного анализа можно утверждать, что РА полностью соответствует действующим критериям международного признания государства, следовательно армянская сторона имеет все все правовые и фактические основания для поднятия вопроса о включении вопроса о международном признании РА в повестку дня переговоров по урегулированию карабахского конфликта.

*Artashes Khalatyan*

**ATTRIBUTES OF STATEHOOD OF THE ARTSAKH REPUBLIC AS A  
POLITICAL AND LEGAL BASES FOR THE INTERNATIONAL RECOGNITION  
OF THE ARTSAKH REPUBLIC**

**Key words:** *Artsakh, international recognition, statehood, UN, EC,  
Montevideo Convention, security*

This article is devoted to the examination of the issue of international recognition of states and to revelation of its criteria. In light to the foregoing the issue of international recognition of the RA and, particularly, its correspondence to the international legal criteria of the recognition of states is considered. The aim of the article is to set up a legal basis for the change of the conception of the stance of the Armenian party in the course of peace negotiations on the Artsakh conflict. New conception should involve the issue of recognition of the RA people's performed self determination as a matter of fact, which virtually means the recognition of the RA's statehood.

The analysis performed shows that the RA completely corresponds to the existing international criteria of statehood, and consequently Armenian party has all legal and factual basis to demand the inclusion of the issue of international recognition of the RA in the negotiation agenda.